ազգի պատիւը պահպանելու համար. վասնորոյ ջերմագին աղօթեցէք առ Աստուած յաջող ճանապարհորդութեանս համար. յիշեցէք իւրաքանչիւրդ ձեր պարտքը և խաղաղութեամբ կացէք ձեր պաշտօնի մէջ»։

Միաբանութեան անդամները մի առ մի համբուրեցին Վեհափառի աջը և դուրս եկան միւս դահլիճը, սպասելու Վեհի դուրս գալուն։

Վանքական գործերի հսկողութիւնը Վեհը յանձնեց Սինօդի աւագ անդամ Երեմիա եպիսկոպոսին։ Մէկ ժամ 45 րոպէին սկըսուեցան զանգերի մեծահնչիւն զօղանջիւնը, որ աղօթքի էր հրաւիրում Կաթուղիկոսի ուղեւորութեան առթիւ, որը Միաբանութեան և ժողովրդի ուղեկցութեամբ, առջեւից ունելով Ձեմարանի երգեցիկ խումբը, ընթացաւ դէպի տաճարը։ Վեհափառ Տէրը երկրպագելով Էջմիածնայ սեղանոյն և «Տէր ուղղեա» աղօթքն ասելուց յետոյ դուրս եկաւ տաճարից և նոյն կարգով, շրջապատող ամբոխի հետ դիմեց դէպի պարսպի արտաքին դուռը, ուր պատրաստ սպասում էին կառքերը։ Ծայրագոյն Պատրիարքը նըստաւ կառք, իսկ նորա ուղեկցող Թադէոս Արքեպիսկոպոսը և Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցը և գաւառանակիր վարդապետը նստեցին հետեւեալ կառքի մէջ. նոցա ետեւից գնում էին կառքերով Վեհափառի մնացեալ ուղեկիցներն և ճանապարհ դնող բազմութիւնը։ Առջեւից ձի նստած ընթանում էին Երեւանի գաւառապետ Սիլիչն և Քալանթարեանցը. յետոյ՝ փոստ – հեռագրատան աստիճանաւոր Ինքուշեանցը. նոյնպէս և Էջմիածնի գաւառապետ պ. Խանաղեանցը. բոլորն իրենց յատկացած ձիաւորներով։ Վեհափառին ձի հեծած ճանապարհ էին գնում նմանապէս և Վաղարշապատի և շրջակայ գիւղերի բնակիչներից շատերը։ Ընթացքը Վաղարշապատի թագաւորական փողոցով խռնուած բազմութեան պատճառով՝ ծանր էր յառաջ գնում։ Բայց և այնպէս մի ժամից յետոյ գնացքը հասաւ Փարաքար գիւղը, ուր ընդառաջեցին տեղւոյն ժողովուրդը և դպրոցի ուսուցիչներն և աշակերտներն, որոց օրհնելով Վեհափառ Տէրն՝ անցաւ յառաջ։

Հեռուից երեւեցան կառքեր, ձիաւորներ, հետեւակներ. Վեհափառի կառքը կանգ առաւ, Երեւանայ այգեաց վերջումն. այն-